

ՏԱՌԱՆԻՇ ԾԱԾԿԱԳՐԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՐ

Պրոֆ. Ա. Գ. ԱՅՐԱՆԱՄՅԱՆ

1944 թ. Նոր-Ջուլայի Ամենափրկիչ վանքի ձեռագրերն ուսումնասիրելիս մեզ հետաքրքրեց հավաքածուի № 203 գրչագրի պարունակած ծածկագրությունը: Մեր փորձերն արդեն ծանոթ ծածկագիր բանալիներով վերծանելու այն՝ արդյունք չտվեցին: Հետագայում ևս քանիցս փորձել էինք վերծանել, բայց հաջողություն չէինք ունեցել: Վերջերս միայն մեզ հաջողվեց գտնել ծածկագրության բանալին: Գտնված այդ բանալիով հնարավոր եղավ վերծանել նույնատիպ այլ ծածկագիր բնագրեր ևս, որոնք հայտնի էին հայագիտության մեջ, բայց մնում էին չվերծանված:

Ծածկագրության այս տեսակին պայմանականորեն տառանիշ ծածկագրություն անունն ենք տալիս, որովհետև գաղտնագրված բնագիրը ներկայացվում է երկուական տառանիշերով՝ իրարից բաժանված կետերով կամ զրծիկներով: Այս խմբի ծածկագրությունից հինգ բնագիր է հայտնի. առաջինը Նոր-Ջուլայի Ամենափրկիչ վանքի վերո մատնացույց արված ձեռագրի ծածկագրությունն է, երկրորդը հանդիպում է Ղալաթիայի № 162 ձեռագրում, երրորդը և չորրորդը գրի են առնված եղել Անկյուրիայում երբեմնի գոյություն ունեցած հայկական ձեռագրական հավաքածուի № 164 և № 180 գրչագրերում, իսկ հինգերորդը պարունակում է Նոր-Ջուլայի № 593 ձեռագիրը:

Նոր-Ջուլայի Ամենափրկիչ վանքի № 203 ձեռագիրը բովանդակությամբ ավետարան է. հիշատակարան շունի: Ձեռագրի գրչության մասին տեղեկություններ չկան: Ուշ շրջանի հիշատակագրությունից երևում է, որ գրչագիրը Նոր-Ջուլայի Սանգիբարան գյուղի Մելքիսեդեկ քահանայի սեփականությունն է եղել և նրա հանձնարարությամբ վերանորոգվել և կազմվել է 1690 թ. Ազարիա անունով կազմարարի կողմից: Ծածկագրությունը գրի է առնված ձեռագրի առաջին թերթի առաջին էջի վրա: Ահա այն.

ՇՍ, ՇՓ, ԼՈ, ԷՃ, ՃՏ, ԸՄ, ԵՁ,
ԷՃ, ՁՍ, ԻՇ, ԽՁ, ԺԻ, ԼՔ, ԵՁ:

Ծածկագրության բնագիրը առանց վերծանության հրատարակված է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանի Նոր-Ջուլայի Ամենափրկիչ վանքի ձեռագրաց ցուցակի առաջին հատորում¹:

¹ Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Ջուլայի Ամենափրկիչ վանքի, հատ. Ա, Երևան, 1970, էջ 251:

Տառանիշ ծածկագրության այս խմբի երկրորդ բնագիրը մեզ հանդիպում է Ղալաթիայի մատենադարանի № 162 ձեռագրում, որն իմաստասիրական նյութերի ժողովածու է, պարունակում է Արիստոտելի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի և այլ փիլիսոփաների աշխատությունների հայերեն թարգմանությունների ընդօրինակությունները: Ձեռագիրը գրված է երկու գրիչների կողմից. առաջին մասը՝ Վարդան քահանա Բալուցու, իսկ երկրորդը՝ Գրիգորի: Պատվիրատուն է Հովհաննես սարկավազը: Ձեռագրի առաջին մասում հիշատակություն կա 1678 թ., իսկ երկրորդում՝ 1724-ից: Ծածկագրության բնագիրը հրատարակված է Բ. Կյուլեսերյանի կազմած Ղալաթիայի ձեռագրաց ցուցակում²: Կյուլեսերյանին և նրա ցուցակի հրատարակիչներին չի հաջողվել վերծանել ծածկագրությունը: Այն բաղկացած է ընդամենը 14 տառանիշից և ղեկավարված է հետևյալ հիշատակարանի մեջ.

«Ահա եղբայր ղփափաքելին քո գրեցի, առնկալ անմեղադրելի խոշորութեան և անհաւանելի գրիս, զի այս շափ էր կար մեր սիրելի եղբայր իմ.

**թց, լհ, գղ, խչ, ժւ, նս, եձ.
բարով վայելես, ամէն»:**

Տառանիշ երրորդ ծածկագրությունը գրի է առնված Անկյուրիայի հայկական մատենադարանի № 164 ձեռագրում (էջ 924): Գրչագիրը «Տարեգիրք ճաշոց» է: Այն գրվել է 1450 թ. Թորոս և Ստեփանոս գրիչների կողմից նիկիտենում և Պրուսեում: Ծածկագրությունը, սակայն, հետագայի գրչության մե է. հիշատակագրություն կա այդ մասին 1678 թ.: Ծածկագրության բնագիրը՝ հրատարակված է Բ. Կյուլեսերյանի կողմից Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում առանց վերծանության: Ծածկագրությունը ղեկավարված է հետևյալ հիշատակարանի մեջ.

**Վերջստին նորոգեցաւ Տարեգիրքս,
որ կոչի Ճաշոց, ձեռամբ և անիմաստ,
խւ'', էյ'', աբ'', խւ'', ժա'', գջ'', լա'',
ժա'', աբ'', շէ''**

«Ձեռամբ իմով կազմեցի զայս, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զուսուցիչն իմ տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեան ուսուց կազմութեամբ

2 Բ. Կյուլեսերյան, Զուցակ ձեռագրաց Ղալաթիոյ աղպային մատենադարանին շաշոց, Անթիլիաս, 1961, էջ 1019:

3 Բ. Կյուլեսերյան, Զուցակ ձեռագրաց Անկյուրիոյ Կարմիր մանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 824:

ա[ր]հեստիս զայս ձերս Աստուած ողորմի ասացէք: Թվին ՌՃԻէ (1678), յուն-
վար ամսոյ ի Ի (20)» (էջ 294):

Ծածկագրութեան շորրորդ օրինակը մեզ հանդիպում է Անկյուրիայի մա-
տենադարանի № 180 ձեռագրում (էջ 750): Դրշագիրը բավանդակութեամբ
Ավետարան է՝ դրված Անկյուրիայի Ս. Խաչ վանքում Մովսէս գրչի կողմից
1547 թ.: Այդ մասին դրիչն իր թողած հիշատակարանում ասում է. «...գրել
երես սուրբ Աւետարանն ձեռամբ մեղապարտ գրչիս Մովսէս անպիտանիս,
որ յոյ՛ աշխատեցայ և գրեցի զսուրբ Աւետարանս ի յԱնկիւրիայ քաղաքն, ի
բերդին ի Սուրբ Խաչին դուռն և ի Սուրբ Աստուածածնին, ի թվին Հայոց ԶՂԶ
(1547) նոյեմբեր Բ (2)»⁴: Ծածկագրութիւնը գրի է առնված հիշատակարանի
վերջին մասում՝ շորս տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրերի
շարքում, որոնցից երկուսը՝ սյունակետագիր և գումարգիր ծածկագրերը.
Կյուլեսերյանը վերծանել է, իսկ մյուս երկուսը, այդ թվում մեզ հետաքրքրող
ծածկագիրը, թողել է չվերծանված: Ծածկագրութիւնը հետևյալն է.

//..... //..... /..
 ԽԶ. ԵԶ. ԷՃ. ԼՔ. ԺՆ. ԲՊ. ԽԶ. ԲՊ. ԹՅ:
 ԷՃ. ԼՔ. ԺՆ. ԸՄ: Ի.մ. Խ. ռ. ր. Ճմ.
 ՅՅ. Ռս. ՌՌ. ԳԴ: ՏՏ :: Է: ԼԵ: Դ. ԼԳ:
 ԻԵ: Է:..: Աստուած ողորմի վարպետաց

Ծածկագրող հեղինակը հիշատակարանի վերջում հայտնում է, որ ծած-
կագրութիւնը 12 տեսակ է լինում և 36 տարատեսակ, որոնցից նա բերում է
միայն հինգի նմուշը:

Հինգերորդ ծածկագրութիւնը հանդիպում է Նոր-Զուղայի Ամենափրկիչ
վանքի № 593 ձեռագրում, որը պարունակում է «Վարք վկայութեանց վար-
դապետաց» աշխատութիւնը՝ ընդօրինակված Նոր-Զուղայում 1699 թ. Աստ-
վածատուր գրչի կողմից: Ծածկագրութիւնը գրի է առնված տարբեր բանալի-
ներով գաղտնագրված եղբայրագիր, սյունակետագիր, փոխարինագիր, օղա-
կետագիր, կետագիր և երկու անձանոթ այլ ծածկագրերի հետ միասին: Այդ
խմբում անշափ ուշագրավ է ճյուղազարդ ծածկագրութիւնը: Թվարկվածներից
հինգը վերծանված են ձեռագրի ցուցակի հրատարակիչների կողմից, իսկ ե-
րեքը, այդ թվում նաև մեզ հետաքրքրող երկտառ ծածկագրութիւնը, մնում են
չվերծանված: Երկտառ ծածկագրութիւնը հետևյալն է.

դռ. րմ. Ծռ. խփ. Լն. խն. գդ. խն. ԹՅ:

Խնդրո առարկա երկտառանիշ այս ծածկագրութեան բնագրերը վերծան-
վում են բավականին բարդ և մեզ բոլորովին անձանոթ բանալիով: Այն կազ-

⁴ Նույն տեղում, էջ 882:

մրված է հետևյալ սկզբունքով. հայկական այբուբենի 36 տառանիշերը տեղադրված են 12 խմբի մեջ՝ յուրաքանչյուրը երեքական տառանիշից: Խմբավորության մեջ նկատվում է որոշակի օրինաչափություն. եռյակ տառախմբերի առաջին տառանիշերը բոլոր հաջորդականության վերցվում են «ա»-ից մինչև «լ»-ն, երկրորդը՝ «խ»-ից մինչև «ո»-ն, երրորդը՝ «չ»-ից մինչև «ք»-ն: Ըստ որում, գաղտնագրության ժամանակ տվյալ եռյակ տառանիշերից բաց է թողնվում այն, որը ծածկագրվում է: Ծածկագրության բանալին հետևյալն է.

Ա Խ Չ Բ Ծ Պ Գ Կ Ջ Դ Հ Ռ
 Ե Ձ Ս Ղ Ղ Վ Է Ը Տ Ը Մ Ր
 Թ Յ Ց Ժ Ն Ի Ի Շ Փ Լ Ո Ք

Ըստ այս ծածկագրության սկզբունքի, օրինակ՝ «Ա» ծածկագրելու համար պետք է վերցնել «ԽՁ», «Խ» ծածկագրելու համար՝ «ԱՁ», «Ձ» ծածկագրելու համար՝ «ԱԽ» և այլն:

Այժմ փորձենք նորահայտ այս բանալիով վերծանել վերը բերված ծածկագիր բնագրերը:

Նոր-Ջուղայի № 203 ձեռագրի⁵ ծածկագրությունը վերծանվում է.

ԵՍ . ՇՓ . ԼՈ . ԷՃ . ՃՏ . ԸՄ . ԵՁ . ԷՃ . ՁՍ . ԻՇ . ԽՁ . ԺԻ . ԼՔ . ԵՁ,
 Ձ Ի ք տ է ր Ս ա և փ ա ն ո ս

Վերծանվում է «Ձիք տէր Ստեփանոս»: «Ձիք» բառի ստուգաբանությունը մենք դժվարանում ենք տալ. արդյո՞ք մականուն է բարձրահասակ, ամրակազմ, հաստատակամ թե մի այլ նշանակությամբ, բայց որ նման անունով մարդ եղել է Նոր-Ջուղայում, այդ մասին վկայություն ունենք Ջաքարիա Քանաքեռցու մոտ. «[էր] երէց մի այրի ի Ջուղայու, որում ասէին Ձիք տէր Ստեփանոս»,— գրում է նա⁶:

Դժվար է մեզ հաստատուն խոսք ասել նաև այն մասին, թե գաղտնագրության մեջ հիշված տեր Ստեփանոսը ձեռագրի գրիչն է, թե հետագայի հիշատակագիրը: Այդ կարելի կլինի պարզել ծածկագրության գրչությունը համեմատելով բուն ձեռագրի գրչության հետ, որը, դժբախտաբար, այժմ մենք կատարելու ի վիճակի չենք:

Ղալաթիայի մատենադարանի № 162 ձեռագրի ծածկագրությունը վերծանվում է.

ԹՅ . ԼՔ . ՂՂ . ԽՁ . ԺԻ . ՃՏ . ԵՁ,
 Յ " Վ ա ն է "

Վերծանված անունը հիշատակարանի ամբողջության մեջ կկարդացվի. «Ահա եղբայր զփափաբելին քո գրեցի, առնկալ անմեղադրելի խոշորութեան

⁵ Լ. Գ. Մ Ի ն ա ս յ ա ն, Յուդակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչյան վանաց մատենադարանի, հատ. Բ, Վիեննա, 1952, էջ 74:

⁶ «Ջաքարիա Սարկապի պատմագրություն», Վաղարշապատ, 1870, էջ 38:

ն անհաւանելի զրիս, զի այս շափ էր կար մեր սիրելի Լղբայր իմ Յովանէս, բարոյ վայելես, ամէն»:

Ճեռագրում Լղած այս հիշատակարաններից մեզ հայտնի է, որ տվյալ ձեռագիրը գրված է Վարդան քահանայի և Առաքել զրչի կողմից: Ծածկագիր բնագրի վերծանությունից պարզվում է, որ ձեռագրի պատվիրատուներից մեկրն էլ հանդիսացել է Հովհաննէս վարդապետը, որի մասին գրիչն իր մի այլ հիշատակարանում խնդրում է. «...յիշեցէք ի Քրիստոս նաև զստացող տառիս զքաջաբան ռաբունապետն ...ղթովհաննէս հեզահոգի վարդապետն»⁷:

Անկյուրիայի մատենադարանի № 164 ձեռագրի ծածկագրության մեջ սպորդել է գրչական երկու սխալ. հինգերորդ զույգի «ԺԱ»-ն պիտի լինի «ԺԻ» և վերջին «ԶՓ» զույգը պիտի լինի «ՇՓ»: Այս ուղղումները կատարելուց հետո ծածկագրությունը կվերծանվի.

ԽԶ ԵԶ ՈՔ ԽԶ ԺԻ ԳԶ ԼՔ ԺՆ ՈՔ ՇՓ,
 Ա. " Լ " Ն Կ " Է Դ Ի

Վերծանված անունը հիշատակարանի ամբողջության մեջ կկարգացվի. «Վերստին նորոգեցաւ տարեղիրզս, որ կոչի ճաշուց, ձեռամբ [տիմար] և անիմաստ Ասլանկուլի, ձեռամբ իմով կազմեցի զայս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր զուսուցիչն իմ տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեամբ ուսուց կազմութեամբ ա[ր]հեստս զայս: Զեր Աստուած ողորմի ասացէք: Թվին ՌՃԻէ (1678) յունվար ամսոյ ի Ի (20)»:

Տվյալ հիշատակագրությունից երևում է, որ Ասլանկուլին հանդիսացել է ձեռագրի կազմարարը: Հավանական է, նա լինի այն անձնավորությունը, որը կազմել է նաև Անկյուրիայի մատենադարանի № 301 ձեռագիրը և այդ մասին թողել զծակետագիր ծածկագրով հիշատակագրություն⁸:

Ի դեպ, Անկյուրիայի № 164 ձեռագրի այս ծածկագրությանը մենք անդրադարձել ենք «Հայկական մի քանի ծածկագրությունների վերծանությունը» խորագրով մեր հոդվածում, բայց բանալուն ծանոթ չլինելով, սխալմամբ կարծել ենք, թե այն ծածկագրված է փոխարինագիր ծածկագրության երեք բանալիներով և մի քանի անհարկի ուղղումներ առաջարկել⁹:

Անկյուրիայի № 180 ձեռագրի մեզ հետաքրքրող ծածկագրության բնագրում ևս նկատվում է գրչական երկու սխալ. «ԺՆ» երկտառից հետո բաց է թողնված «ԽԶ» երկտառը և ավելորդ է ութերորդ «ԲՊ» տառախումբը: Այս ուղղումները կատարելուց հետո ծածկագրությունը կվերծանվի.

«ԽԶ . ԵԶ . էՆ . ԼՔ . ԺՆ . ԽԶ . ԲՊ . ԽԶ . ԹՅ . էՆ . ԼՔ . ԺՆ . ԸՄ»:
 Ա. " " " " Է " Ժ Ե " " Է Ը

Գլխավոր հիշատակարանից հայտնի է, որ ձեռագրի գրիչն է Վարդան Եպիսկոպոսը, իսկ Աստվածատուրը նրա Լղբայրն է («Իմաստասէր սարկաւազ Աստուածատուր, որ այժմ կոչի Կուլամիր»), որին և հանձնարարվել է «Մաղկել ձեռագիրը»¹⁰:

⁷ «Ցուցակ ձեռագրաց 'Վալաթիո», էջ 1020:

⁸ «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո», էջ 1266:

⁹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 175:

¹⁰ «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո», էջ 880:

Նույն ձեռագրում սյունակետագիր բանալիով ծածկագրված է ծաղկողի անունը, որը վերծանել է Կյուլեսերյանը.

|||/..... /..... |||/..... |||... /... /..... |||/..... /..
Տ է ր Յ ա կ ո ր

Երկտառ ծածկագրությունը հաջորդում է փոխարինագիր մի ծածկագիր, որը Կյուլեսերյանը չի վերծանել: Բերում ենք այն մեր վերծանությամբ.

Ի Մ Խ Ռ Բ
Մ Ի ն ա ս

Հավանական է այս Մինասը լինի գրչի եղբոր որդին, որի մասին հիշատակարանում ասված է. «Յիշեսջիբ ... եղբայրորդիբս՝ տիրացու Մինաս և տիրացու Յովսէփ»¹¹:

Փոխարինագիր ծածկագրությունը հետևում է գումարգիր ծածկագրությունը, ուր զաղտնագրված է գրչի մյուս եղբոր որդին՝ Հովսեփը: Այս ծածկագրությունը վերծանել է Կյուլեսերյանը.

ՃՄ . ՅՅ . ՌՍ . ՌՌ . ԳԴ . ՏՏ:
Յ " ղ " է փ

Հինգերորդ ծածկագրությունը մեզ անծանոթ մի այլ բանալիով է գաղտնագրված, որի մասին խոսք կլինի առանձին:

Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի № 593 ձեռագրի երկտառ ծածկագրության մեջ նկատվում են գրչական հետևյալ սխալները. երրորդ զույգը պետք է լինի ո՛չ թե «ՄՍ», այլ՝ «ՁՍ», և վեցերորդ զույգը պետք է լինի ո՛չ թե «ԳՁ», այլ՝ «ԳՋ»: Այդ ուղղումները կատարելուց հետո ծածկագրությունը կվերծանվի.

«ԴԻ . ԸՄ . ՁՈ . ԻՓ . ԷՃ . ԽՁ . ԳՋ . ԽՁ . ԹՅ»:
Հ ր և շ ա ա կ ա ց

Այս նույն ծածկագրության հետ միասին այլ բանալիներով բոլոր բնագրերում էլ գաղտնագրված են մարդ կամ հրեշտակ բառերը: Այսպես, երրորդ ծածկագրությունը, որ գումարգիր է, վերծանվում է.

«ԼԵԼԵ ՍՇՍՇ Ե ՄՄԻՄ ՍՍ Ա ԼԼ Ա ՎՎ»:
Հ ր և շ ա ա կ ա ց

(վերծանված է ձեռագրի ցուցակը կազմող հեղինակների կողմից)¹²:

Հինգերորդ ծածկագրությունը, որ փոխարինագիր ծածկագրով է գաղտնագրված, վերծանվում է¹³.

¹¹ Նույն տեղում:
¹² «Յուրակ ձեռագրաց Նոր-Ջուղայի», հատ. Բ, էջ 74:
¹³ Նույն տեղում:

«Չ . Ե . Ր . Ծ . Դ . Ռ . Ո : Ս . Ռ . Ե . Տ»:
 Հ Ր Լ Հ Մ Ս Կ Մ Ս Ր Կ

Վեցերորդ ծածկագրությունը օղակետագիր ծածկագրություն է, որը վերծանվում է¹⁴.

○○○ ○ ○○○○ ○ : ○○ ○○○○ ○ ○○○ ○○○○ ○ ○○
 Ծ Ս Ր Դ Հ Ր Ե Հ Մ Ս Կ

Յոթերորդ ծածկագրությունը տառակետագիր է, որը վերծանվում է¹⁵.

Ծ Ս Ա Յ Վ Ա Խ Ի : Մ Ա Վ Բ Ի Լ Փ
 Հ Ր Ե Հ Մ Ս Կ Բ Մ Ս Ր Դ Ի Կ Բ

* * *

Անկյուրիայի մատենադարանի № 301 և Նոր-Ջուղայի № 239 ձեռագրերում հանդիպում են մեզ անծանոթ բանալիով գաղտնագրված մեկական նույնատիպ ծածկագրեր, որոնք կազմված են հայկական այբուբենի մեկական և զույգ տառանիշերի խառնուրդից, որոնց կողքերին դրված են տարբեր թվով կետեր: Սրանց մենք զուգախառն ծածկագրեր անունն ենք տալիս:

Անկյուրիայի մատենադարանի № 301 ձեռագրի սլարունակած ծածկագիրը հետևյալն է. «է: ԼԵ: Դ. ԼԳ: ԻԵ: է:»:

Նոր-Ջուղայի № 503 ձեռագրի ծածկագրությունն է.

«Ս . Լէ . Փ . Ժէ . Քլէ . Գ . Ր . Վ . Խ . ՓԺԴ»:

Առաջինը հրատարակված է Կյուլեսերյանի Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում¹⁶, իսկ երկրորդը՝ Մինասյանի կազմած Նոր-Ջուղայի ձեռագրաց ցուցակում¹⁷: Երկու դեպքում էլ ծածկագրերը թողնված են չվերծանված:

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ ծածկագրությունը, իրապես, բավականին բարդ գաղտնագրերից է:

Ծածկագրության կազմության գաղտնիքը պարզելու գործում որոշ շափով մեզ օգնեցին Անկյուրիայի մատենադարանի № 301 ձեռագրի տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրերը, որոնք սլարունակում էին գրչի բարեկամների անունները՝ եղբայրների (Տեր Հակոբ և Աստվածատուր), եղբորորդիների (Մինաս և Հովսեփ): Կասկած չունեինք, որ տվյալ ծածկագրության տակ ևս գաղտնագրված պիտի լինի գրչի բարեկամներից մեկնումեկի անունը: Քանի որ ծածկագրությունը բաղկացած էր վեց միավորից, ուստի պետք էր փնտրել գրչի հիշատակարանում հիշված նրա բարեկամներից այնպիսի մեկին, որի անունը բաղկացած լիներ վեց տառանիշից և առաջին ու

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո», էջ 880:

¹⁷ «Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի», հատ. Բ, էջ 74:

վերջին տառերը նույնահնչյուն լինեին: Հիշատակարանում այդպիսի երկու անուն կա՝ Սարգիս (գրչի փեսայի անունը) և Մարիամ (գրչի բույր): Պարզվեց, որ զաղտնագրված է Մարիամի անունը, որ և հնարավորություն տվեց մեզ հասկանալու ծածկագրության կառուցվածքը: Ծածկագրությունը զաղտնագրված է հետևյալ բարդացումներով:

Ա. Տառանիշերի կողքին դրվածները մեկական միավորով առաջ են շարժում դրանք ըստ հայկական այբուբենի հաջորդականության:

Բ. Զույգ տառանիշերի թվական դումարը հաշված է ոչ թե ըստ նրանց սովորական թվական արժեքի, այլ՝ այբուբենի տառանիշերի հաջորդականության: Օրինակ՝ «Ի» տառը հավասար է ոչ թե 20-ի, այլ՝ 11-ի, «Ճ»-ն հավասար է ոչ թե 100-ի, այլ՝ 19-ի և այլն:

Գ. Երկու տառանիշերի թվական դումարը 36-ից անցնելու պարագային, անհրաժեշտ է լինում մնացածը հաշվել նորից այբուբենի սկզբնավորությունից: Օրինակ, ԼԷ-ն հավասար է «Ա»-ի ($37 - 36 = 1$), կամ «ԼԹ»-ն հավասար է «Գ»-ի ($39 - 36 = 3$) և այլն:

Դ. Այս նրբությունները հաշվի առնելուց հետո ծածկագրության տառանիշերի մի մասը վերծանվում է փոխարինադիր բանալիներով:

Տվյալ ծածկագրության վերծանությունը, սակայն, կապված էր որոշ դժվարությունների հետ. երբ մեզ հայտնի էր արդեն ծածկագրության զաղտնիքը, պարզվեց, որ ներկայացված բնագրում սպրդել են մի քանի սխալներ, որոնք անհրաժեշտ էր ուղղել: Դրանք հետևյալն են.

Ա. «է»-ի կողքին պետք է լինի ոչ թե երկու, այլ չորս կետ: «ԼԳ» դույզը պետք է ուղղել «ԼԶ»: Հաջորդ «Իէ» դույզը պետք է ուղղել «Լէ»: Եվ վերջին հինգ տառի փոխարեն պետք է հաշվել չորս (մեկն ավելորդ է): Այդ ուղղումները կատարելուց հետո ծածկագրությունը կստանա հետևյալ տեսքը.

«է : : ԼԵ: Դ. ԼԶ: ԼԻ: է:»:

Կետերը հաշվի առնելով, այն կդառնա՝

«Ի ԼԷ Ե ԼԴ ԼԷ Ի»:

Զույգ թվերը բաց անելուց հետո կվերծանվի.

Ի Ա Ե Ր Ա Ի

Մ ա ը և ա մ

Ինչպես տեսնում ենք, տվյալ ծածկագրության մեջ զաղտնագրված է եղել գրչի քրոջ՝ Մարիամի անունը:

Տվյալ վերծանությունը թեև ինքնին պատմական արժեք չի ներկայացնում, սակայն կարևոր է նրանով, որ օգնում է մեզ ծանոթանալու հայ զաղտնագրության մի նոր բանալու հետ, որը, անշուշտ, պիտանի կարող է լինել այդ բնույթի այլ ծածկագրերի վերծանելու համար:

Զեռագրաց ցուցակում բավականաչափ աղավաղված է ներկայացված նաև նոր-Ջուղայի մատենադարանի № 593 ձեռագրի դույզախառն ծածկագրության բնագիրը: Այն, պետք է խոստովանենք, հնարավոր է լինում վերծանել մեծ ձգվածությամբ:

Ելնելով նախորդ ծածկագրության սկզբունքից, մենք հնարավոր ենք համարում կատարել որոշ ուղղումներ:

Տպագրված բնագիրը	Ս.	Ա.	Փ.	Ժ.	Ք.	Լ.	Դ.	Ը.	Վ.	Խ.	Փ.	Ժ'.
Ուղղումից հետո	Ս	Ա	Տ.	Ժ:	Ք	Լ:	Դ	Ը	Լ:	Խ	Փ:	Ժ'.
Կետաթափից հետո	Ս	Ա	Ը	Ժ:	Ք	Լ:	Ե	Ը	Տ	Խ	Ա	Ժ:
Զույգերը հաշվելով	Ս	Ա	Ը	Կ	Ք	Հ	Ե	Ը	Տ	Խ	Ա	Կ
Վերծանությունը	Մ	Ա	Ը	[դի]	Կ	Ք	Հ	Ը	Տ	Ա	Կ	

Այսպիսով, Նոր-Զուղայի մատենադարանի № 593 ձեռագրի պարունակած զույգախառը ծածկագրությունը վերծանվում է. «Մարդիկը: Հրեշտակ»:

Ի դեպ, այս նույն ծածկագրության հետ միասին ութ տարբեր բանալինե-րով գաղտնագրված ծածկագրերից վեցում դարձյալ գաղտնագրված են «Մարդ» և «Հրեշտակ» բառերը:

* * *

Զմմառի մատենադարանի № 617 ձեռագրում, որը գիտական տարբեր նյութերի ժողովածու է, գրի է առնված հետևյալ ծածկագիր հիշատակարանը. «Գրեցաւ ձեռամբ իմով ի յերկիրոն Հնդկաց և Բանկալայ քաղաքին ի Սէ-տապատ կոչեցեալ քաղաքն, ի թուականիս մերոյ ՌՄԺԲ (1763) յունվարի ԺԵ (15): Գրեցաւ ԻՆՔԹՊԸ. 'Ձ Յ Ո Յ Ո. Փ Թ Ը է Ձ Փ»:

Ծածկագիր այս հիշատակարանը հրատարակված է Ն. Ակինյանի և Հ. Ոսկյանի կազմած Զմմառի մատենադարանի ձեռագրաց ցուցակի երկրորդ հատորում¹⁸: Նրանք դժվարացել են վերծանել ծածկագրությունը և պարզել զըր-շի անունը, ուստի հարկադրված են եղել ձեռագրի արտաքին նկարագրության հարցացանկում միայն նշելու, թե՛ «Գրիչ- և տեղի անհայտ»:

Գրչության վայրն անհայտ համարելը, իհարկե, թուրիմացություն է, քա-նի որ վերը բերված հիշատակարանում որոշակի նշվում է, որ ձեռագիրը զըր-ված է Հնդկաստանի Սեյդաբադ քաղաքում, իսկ զրչի անունը անհրաժեշտ էր փնտրել ծածկագրության մեջ:

Ծածկագրությունը, ինչպես հետո պարզվեց, գաղտնագրված է մեզ բոլո-րովին անծանոթ բանալիով, ուստի մեր նախնական փորձերը՝ վերծանելու այն ծանոթ բանալիներով, արդյունք չտվեցին: Չօգնեց նաև որոշ գրիչների անուն-ների համադրությունը ծածկագրության հետ, որոնք այդ նույն ժամանակնե-րում գտնվել են Հնդկաստանի Սեյդաբադ քաղաքում և ձեռագրեր են գրել (Եփ-րեմ աբեղա, Արիստակես Կիրակոսյան): Մենք համոզված էինք, որ առաջին տառախումբն ըստ իմաստի առանձին բառեր են, ուստի ենթադրում էինք, որ առաջին տառախումբը պետք է պարունակի «ձեռամբ» բառը, որը, սովորա-բար, այդպիսի դեպքում գործ է ածվում ծածկագրությունների մեջ, իսկ երկ-րորդը՝ «զրչի»: Այդ երկու բառերն իրենց տառերի թվով համապատասխա-նում էին ծածկագիր տառախմբերի տառերի թվին: Հետագայում, սակայն, երբ մեզ հայտնի դարձավ ծածկագրության բանալին և վերծանեցինք ծածկա-գրությունը, պարզվեց, որ առաջին բառի մասին մեր կռահումը ճիշտ էր, իսկ երկրորդինը՝ սխալ:

Ծածկագրությունը գաղտնագրված է հետևյալ բանալիով.

¹⁸ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի», հատ Բ (Անտոն-յան հավաքածու), կազմեցին Ն. Ակինյան և Հ. Ոսկյան, Վիեննա, 1971, էջ 221:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Ջ	Է	Ը	Թ
Թ	Ր	Է	Դ	Ե	Գ	Գ	Ր	Ա
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Ն	Չ	Ղ
Կ	Ճ	Տ	Կ	Ժ	Խ	Լ	Ի	Ժ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Չ
Չ	Ա	Հ	Ո	Շ	Ն	Յ	Մ	Ճ
Ո	Ս	Վ	Տ	Ր	Յ	Ի	Փ	Ք
Ք	Փ	Լ	Գ	Ր	Մ	Վ	Ս	Ն

Տվյալ բանալիով դադարեցրված ծածկագիր բնագիրը մեր աղբյուրագիտական պրակտիկայում առաջին անգամ էր հանդիպում։ Այն կազմված է հետևյալ սկզբունքով. հայկական այբուբենն, ըստ հաջորդականության, դասավորվում է շորս խմբի մեջ, և այդ խմբի շարքերը ոչ թե փոխարինում են իրար, ինչպես փոխարինագիր ծածկագրության ժամանակ, այլ կրկնվում են հակառակ հերթականությամբ. շարքի առաջին տառերը դրվում են ձախից աջ, իսկ նրան փոխարինող շարքի տառերը՝ աջից ձախ։ Տառանիշերի նման դասավորության հետևանքով Ե, Մ, Շ և Ր տառերը պահում են իրենց հնչյունական արժեքները։

Նորահայտ այդ բանալիով խնդրո առարկա ծածկագրությունը վերծանվում է.

«Գրեցաւ Ի Ե Ք Թ Պ Ը Դ Յ Ո Յ Չ Ո Փ Թ Ր Է Չ Փ Չ Մ Ր Գ»։
«Դրեցաւ ձ Ե Ն Մ Մ Բ Ի չ Ն չ Ի Ն Ս ա Ր գ Ի ս Գ պ Ր Ի»։

Այսպիսով, պարզվում է, որ Զմմառի մատենադարանի № 617 ձեռագրի գրիչն է հանդիսացել Սարգիս Դավիթը։

Ի դեպ, Զմմառի ձեռագրաց ցուցակի հրատարակիչները տասը տարվա սխալով են թվադրել ձեռագրի գրչության ժամանակը։ Ձեռագրում գրչության թվականը նշված է չափածո հետևյալ հիշատակարանի մեջ.


Գրեցան բանքս չափական՝
Ի յուրվման րնթացից ժամանակի Յաբեթական,
Տոհմիս տոմարի Ի վեց անգամ,
Երկերիւր և մէտասան յաւելեալ թուի,
Ի սեպտեմբերի ԺԱ (11) աւուր (թ. 81ա)։

Ցուցակի հրատարակիչներն այս հիշատակարանը սխալ վերծանելով ստացել են 1772 թ.։ Իրականում, այն վերծանվում է տասը տարի պակասով. վեց անգամ երկու հարիւր («Ի վեց անգամ երկերիւր»), ստանում ենք 1200, նրան գումարած հավելյալ 11-ը և հայկական թվականի տարբերությունը՝ 551, ստանում ենք 1762 ($1200 + 11 + 551 = 1762$)։

Որ մեր այս վերծանությունը ճիշտ է, այդ երևում է վերը բերված ծածկագիր հիշատակարանից, ուր թվականը նշված է առանց ծածկագրության. «...ի թուականիս մերոյ ԹՄԺԲ (1212), յունվարի ԺԵ»։ Հայկական մեծ թվականի 1212-ին գումարելով 551 ստանում ենք 1763 ($1212 + 551 = 1763$) մեր վերծանած թվականից մեկ տարով ավելի։

Եվ այսպես, պարզվում է, որ Զմմառի № 617 ձեռագիրը գրված է Հրեհայկաստանի Սեյդաբաղ քաղաքում Սարգիս Դավիթի կողմից 1762—1763 թթ.։

Նոր-Ջուղայի մատենադարանի № 593 ձեռագրում տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրություններից առանձնապես ուշագրավ է մի բնադիր, որն արտաբուստ թողնում է դարդագրի տպավորություն¹⁹։ Այն հետևյալն է։




Այս ծածկագրությանը մենք պայմանականորեն ճյուղագիր ծածկագրություն անունն ենք տալիս, նկատի ունենալով նրա արտաքին ձևը. վերև ձգվող ոստի վրա աջից և ձախից բարձրանում են տարբեր թվով ճյուղեր, Պարզվում է, որ ձախից բարձրացող ճյուղերը ներկայացնում են հայկական միավոր, տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվերի շորս շարքերը, իսկ աջից՝ այդ շարքերի համապատասխան տառանիշերը ըստ համարական կարգի։

Ծածկագրության բանալին հետևյալն է.

↙ ա	↙ բ	↙ գ	↙ դ	↙ ե	↙ Վ	↙ է	↙ շ	↙ ը	↙ ր
↙ ծ	↙ ի	↙ լ	↙ ռ	↙ ս	↙ Վ	↙ հ	↙ ջ	↙ ղ	↙ ճ
↙ զ	↙ յ	↙ լ	↙ ռ	↙ շ	↙ ը	↙ Վ	↙ է	↙ շ	↙ ը
↙ ռ	↙ ս	↙ Վ	↙ հ	↙ ջ	↙ ղ	↙ ճ	↙ լ	↙ փ	↙ ք

Վերը բերված ծածկագրությունն այս բանալիով վերծանվում է.



հ ր ե շ տ ա կ ք

Տվյալ վերծանությունը կատարված է ոչ թե մեր, այլ՝ ձեռագրաց ցուցակի հրատարակիչների կողմից, բայց մենք անհրաժեշտ համարեցինք մեջ բերել

¹⁹ «Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի», հատ. Բ, էջ 4.

և գիտական լայն շրջանառության մեջ դնել, նկատի ունենալով, որ մեր պատմական հուշարձանների վրա և մանրանկարչության մեջ հաճախ կարելի է տեսնել նման զարդագրեր, որոնց տակ, անհավանական չէ, որ լինեն քարգործ վարպետների և զարդանկարող ծաղկարարների անունները: Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր դեպքերում թույլատրելի է եղել պատվիրատուների կողքին գրել նաև ստեղծագործող մշակների անունները:

* * *

Մաշտոցի անվան մատենադարանի № 8446 ձեռագրում երկու տեղ հանդիպում է հայկական տառանիշների ձևափոխությունների միջոցով կազմված անծանոթ ծածկագրության բանալի «Այս Օհանայ գիրն է» վերնագրով (թ. 136ր և 143ա): Այդ նույն ծածկագրության մի այլ բանալի ընդօրինակված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 9156 ձեռագրում (թ. 6ա): Ո՞վ է ծածկագրությունը կազմող այս Օհանը կամ Հովհանը, դժվար է որոշակի ասել, բայց չենք կասկածում, որ նա պետք է եղած լինի քիմիկոս կամ ալքիմիկոս, որովհետև հիշված երկու ձեռագրերն էլ արհեստագործական բովանդակությամբ են և ծածկագրության բանալին, անշուշտ, պատահական ձևով այնտեղ գրվել չէր կարող:

Ահա այդ բանալին:

1	†	†	9	9	H	2	H	U	9
u		f	q	r	e	y	k	c	ø
9	9	H	p	p	9	9	Հ	3	2
o	r	r	L	r	o	q	Հ	3	2
9	9	9	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ
o	r	r	L	r	o	q	Հ	3	2
9	9	9	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ	Հ
o	r	r	L	r	o	q	Հ	3	2

Այս ծածկագրությամբ հիշված № 8446 ձեռագրում զաղտնագրված են մի քանի արհեստագործական բնույթի բաղադրատոմսեր: Ձեռագիրը քիմիական բնագիր է, բովանդակում է հարյուրից ավելի բաղադրատոմսեր ոսկերչության, արծաթագործության և այլ արհեստների վերաբերյալ: Գրված է Ղրիմի Բաղչիսարայ քաղաքում Հովասափի որդի Առաքելի կողմից 1725 թ., որն իր թողած չափածո հիշատակարանում խոսելով օգտագործած ծածկագրության կարեւորության մասին, հետևյալն է գրում.

Արդ զրեցաւ փոքր զրդգիկս, որ է անպատմելի, անճառելի,
Սայ չէ անմտած դործելի, այլ իմաստնոց է զովելի,
Թէպէտ սայ ծածուկ է պահուելի, այլ խորագիտաց գիտելի,

Ով որ հասցէ այսմ գործի, առցէ ղփառս հաւիտենի,
Սայ գործով է ծածուկ, յայտնի և բաց աչօք տեսանելի,
Ով հասնի սորին մասի տրուղ է բարեաց ամենայնի...²⁰:

Հեղինակը ձեռագրի թ. 143ա-ում տվյալ ծածկագրով գաղտնագրել է իր անունը և ձեռագրի գրչության թվականը²¹, բերում ենք ծածկագրությունը մեր վերծանությամբ:

Н Е Ј Ы О Ј Л Н Г Е О Г Н Я Ы
Ծ Ա Ն Ն Յ Ց Վ Է . Ն Ն

Վերծանությունը կարդացվում է. «Ես Միքայելս գրեցի թվին ԹՃՀԹ (1729)»:

Նույն ծածկագրությունն օգտագործված է նաև մի քանի բաղադրատոմսեր գաղտնագրելու համար: Ստորև բերում ենք նրանցից երկուսը մեր վերծանությամբ: Առաջինը վերաբերում է կաթից դայմաղ (սեր) պատրաստելուն:

Վերծանված կկարդացվի²². «Եթէ կամիս կաթն դայմախ շինես, այսպէս արա. առ ինչիւրին փայտին կաթն կամ տերեւին կաթն, բեր կէս հօխա, խամ կաթն տաքցուր, յիտ[ոյ] առ բեր այն ասած ինչիւրին կաթն, կաթցուր կաթին մէջն հինգ վեց կաթ, որ մի քիչ կենաս, աստուծով այն կաթն դայմախ է դառնալու ուղածիտ պէս կաթն, որպէս որ մածուն անիլ, այնպէս կլինի, կաթցուր»²³:

Երկրորդ ծածկագրությունը կաթից դյուրին ճանապարհով յուղ պատրաստելու բաղադրատոմս է.

Վերծանությունը կարդացվում է. «Եթէ կամիս կաթն եղ շինես, այսպէս արա. առ մի հօխա խամ եղ, դիր մին մեծ ամանի միջում, բեր իսմ կաթն երկու հօխայ, ած եղին վերայ. սրմրութ այնչափ, որ մին մինու ուտէ, ետև պարզ ջուր լից վրան, բամէ, ամէնն ելնուլ է եղ»:

БУКВЕННЫЕ ТАЙНОПИСИ И ИХ ДЕШИФРОВКА

Проф. А. Г. АБРАМЯН

(Резюме)

Рукописное наследие армянского средневековья богато тайнописью. Среди них большую группу составляют, в частности, тексты, зашифрованные армянскими буквами или другими знаками. Они встречаются з

²⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8446, թ. 141ա:

²¹ Նույն տեղում, թ. 142բ:

²² Ընդգծված բառերը ծածկագիր են, տպագրական դժվարությունները հաշվի առնելով, տալիս ենք այն մեր վերծանությամբ:

²³ Նույն տեղում, թ. 142բ:

памятных записях рукописей или же в зашифрованных текстах, посвященных тому или иному ремеслу. С целью сохранения в тайне своего опыта и специальных знаний ремесленники записывали их тайнописью.

Публикуется ряд тайнописных текстов, которые, будучи известны в арменоведении, остались недешифрованными из-за отсутствия ключей к этим шифрам. В статье использованы тайнописные тексты из собраний Матенадарана им. Маштоца, Новой Джульфы (Иран), Галаты (Стамбул), армянского хранилища рукописей в Змаре (Ливан).

Намн приводится ключ к каждой из публикуемых тайнописей и их дешифровка. Дешифрованные тексты позволяют установить принадлежность рукописи тому или иному писцу, что важно с источниковедческой точки зрения, а также раскрывают некоторые секреты ремесленного искусства средневековья.